



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate



Թի 1730  
Ապրիլ 7, 1994

Հոգեշնորհ  
Տ. Բարգէն Օ. Վրդ. Անուշեան  
Հովի Ա. Թովմաս Եկեղեցոյ  
Նախագահ Ծխական Խորհուրդի  
Թէնէֆլայ.

Սիրելի Հայր Բարգէն,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Փետրուար 28, 1994 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Յունուար 30 եւ Փետրուար 6, 1994-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի հինգ անդամներ: Կու տաք բու՛նարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

- Էն Աճէմեան
- Արփի Արսլանեան
- Տոքթ. Լեւոն Չափան
- Կրէյս Յակոբեան
- Սիւզըն Ծամամեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք հետեւեալները. Համայնքիդ Հաշուեքննիչ Ցանձնախումբի ընտրութիւնը չէ կատարուած Կանոնադրութեան բարեփոխուած տրամադրութեան համաձայն (14 F, Անգլերէն բաժնին մէջ). երեք անդամներ պէտք է ընտրուին՝ առաջինը երեք տարուան, երկրորդը երկու տարուան եւ երրորդը մէկ տարուան համար, եւ յաջորդաբար ամէն տարի մէկ հոգի պիտի ընտրուի երեք տարուան շրջանի համար: Անդամական Ժողովի ատենագրութեան մէջ արձանագրուած է որ հինգ տարուան համար ընտրութիւն կատարուած է Հոգեւոր Հովիւի. ճիշդ է որ Թեմական կանոնադրութեան համաձայն հինգ տարուան շրջանի համար կարելի է ընտրել Հոգեւոր Հովիւ մը, սակայն կը փափաքինք ձեր ուշադրութեան յանձնել որ ռեւէ Հոգեւոր Հովիւի պաշտօնավարութեան շրջանը եւ անոր տեղափոխութիւնը այլ ծուխ մը միայն թեմակալ Առաջնորդն է որ կ'որոշէ՝ խորհրդակցութեամբ տեղական Ծխական Խորհուրդին:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթանքն է որ Տէրը Իր հովանինն ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

*Խաչատուր Աբգ. Մարտիրոսեան*  
ԽԱՇԱԿ ԱՐԶ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
Առաջնորդ